Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

99-30.1-Մ2-4 գլխավոր մասնագետ(2023-04-28)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ | քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն | գլխավոր մասնագետ, (99-30.1-Մ2-4)

1.2 Ենթակա և հաշվետու է

Վարչության գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության մյուս գլխավոր մասնագետներից մեկը

1.4 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, Վայոց ձորի մարզ, ք.Եղեգնաձոր Շահումյան 5

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. Իրականացնում է մարզային (տեղական) նշանակության ճանապարհների կամուրջների, թունելների, այլ ինժեներական կառույցների շինարարության, պահպանման ու շահագործման ապահովման աշխատանքները.
2. Իրականացնում է ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում կառուցապատման նպատակով համայնքների ղեկավարների կողմից ներկայացված հողհատկացումների առաջարկությունների և նախագծային փաստաթղթերի համաձայնեցումների գործընթացը (պետական կառավարման լիազոր մարմինների հետ).
3. Իրականացնում է ճանապարհաշինության բնագավառի միջնաժամկետ ծախսային ծրագրի և բյուջետային հայտի կազմման աշխատանքները.
4. Իրականացնում է պետական բյուջեով նախատեսված մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային ընթացիկ, ամառային ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքները՝ համաձայն ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային և ամառային ընթացիկ պահպանության ու շահագործման աշխատանքների մակարդակի գնահատման և ընդունման մեթոդիկայի.
5. Իրականացնում է Մարզի տարածքում միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, պահպանման ու շահագործման ուսումնասիրության աշխատանքներ.
6. Իրականացնում է Մարզում կապի, էներգետիկայի ոլորտների առկա խնդիրների բացահայտման և դրանց վերացման ուղղությամբ պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ համագործակցության ապահովման և գործողությունների փոխհամաձայնեցվածության աշխատանքները.
7. Իրականացնում է Մարզի տարածքում համապատասխան ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքներ.

8. Մասնակցում է Մարզի քաղաքացիական պաշտպանության բնագավառում Վարչությանը վերապահված գործառույթների իրականացմանը:

Իրավունքները.

1. մասնակցել միջմարզային, ներմարզային և ներհամայնքային ավտոբուսային (միկրոավտոբուսային) կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների հետ քննարկումներին.
2. մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, պահպանման ու շահագործման աշխատանքներ իրականացնող կազմակերպություններից պահանջել կատարված աշխատանքների ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն, լրացուցիչ փաստաթղթեր.
3. վերահսկել և համաձայնություն տալ միջմարզային, ներմարզային, ինչպես նաև ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղային ցանցերին.
4. իրականացնել հսկողություն Մարզի տեղական ինքնակառավարման մարմիններում՝ իրավական և մասնագիտական հսկողության շրջանակում և ներկայացնել համապատասխան առաջարկություններ և անհրաժեշտ տեղեկատվություն:
5. իրականացնել հսկողություն սուբվենցիոն ծրագրերով ոլորտին առնչվող Մարզում անցկացվող աշխատանքների նկատմամբ.
6. մարզային զարգացման գործունեության ծրագրի իրականացման համար կատարել մոնիտորիգ և մասնակցել համապատասխան քննարկումներին.
7. համապատասխան մարմիններից պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն:

Պարտականությունները.

1. ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ միջմարզային, ներմարզային և ներհամայնքային ավտոբուսային (միկրոավտոբուսային) կանոնավոր փոխադրումների երթուղային ցանցի վերաբերյալ.
2. ներկայացնել առաջարկություններ Մարզի տարածքում գտնվող միջպետական և հանրապետական նշանակության, Մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, պահպանման ու շահագործման աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ.
3. ուսումնասիրել Մարզային (տեղական) նշանակության ճանապարհային ցանցը, վերլուծել արձանագրված խնդիրները և սահմանել առաջնահերթությունները.
4. ծանոթանալ և ուսումնասիրել կապի և էներգետիկայի ոլորտների պետական կառավարման համակարգի մարմինների կողմից համապատասխան տարածքային ծառայությունների ղեկավարներին տրված հանձնարարարարականները.
5. իրականացնել տրանսպորտի, ճանապարհաշինության, կապի, էներգետիկայի բնագավառում տիրող իրավիճակի մշտադիտարկում.
6. կազմել ճանապարհաշինության բնագավառում տարեկան աշխատանքային պլանը, ինչպես նաև կատարված աշխատանքների եռամսյակային կտրվածքով իրականացնել մոնիտորիգ և նախապատրաստել հաշվետվություններ.
7. իրականացնել քաղաքացիների ընդունելություն, անհրաժեշտության դեպքում տրամադրել մեթոդական պարզաբանումներ, խորհրդատվական օգնություն:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

1. ուղղություն	ճարտարագիտություն, արդյունաբերություն եվ շինարարություն		
2. ոլորտ	ճարտարագիտություն		ճարտարապետություն եվ շինարարություն
3. ենթաոլորտ	Ցամաքային և օդային փոխադրամիջոցներ		
4 մասնագիտություն	Տրանսպորտային համակարգեր	Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ճարտարագիտության կամ քաղաքաշինության կամ տրանսպորտի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ.

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
  - Բարեվարքություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  - Ծրագրերի մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Ծառայությունների մատուցում
  - Բողոքների բավարարում
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման կամ դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական կամ տարածքային ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: